# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հունվարի 1-ին, հինգշաբթի. - Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Հունվարի 4-ին, կիրակի. - Է. կիր. Յիսնակաց: Զ. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Տ. Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հունվարի 5-ին, երկուշաբթի. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 18):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Մայրավանքի ողջ միաբանությունը և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, Ս. Ծննդյան շարականների երգեցողությամբ ուղղվեցին դեպի Վեհարան, որտեղ Տնօրինեքի արարողություն կատարելուց հետո՝ շարժվեցին սեղանատուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը խնդությամբ տոնելու:

***Հունվարի 6-ին, երեքշաբթի. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին (տես էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

***Հունվարի 7-ին, չորեքշաբթի. - Բ. օր Ծննդեան: Մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հակոբ քահանա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Եթե Քրիստոս հա-

րությունն չի առել, ապա իզուր է ձեր հավատը» (Ա Կորնթ. ԺԵ 17) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 26):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

***Հունվարի 11-ին, կիրակի. - Ջ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ջաղօթս իմ Տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա, ի գաւիթս տան Տեառն, եւ ի մէջ քո Երուսաղէմ» (Սաղմ. ՃԺԵ 18-19) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 21):

***Հունվարի 13-ին, երեքշաբթի. - Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հունվարի 18-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Հունվարի 25-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Որ հաւատայ ի Նա՝ ոչ դատապարտեսցի» (Հովհ. Գ 18) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Երուսաղեմի հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց վանքի միաբան Գերաշնորհ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանի և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի հոգիների խաղաղության համար: